ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № _____ «____»_____2023

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. ճանապարհորդական դրամաշնորհների ֆինանսավորման նպատակով կազմակերպել մրցույթ,
2. հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված 1-ի,
3. սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտական հարցերի գծով պրոռեկտորին,
4. սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում է ԵՊՀ աշխատակից-գիտնականների աջակցության ճանապարհորդական դրամաշնորհների իրացումը՝ արտերկրում գիտական միջոցառումներին (գիտաժողովներ, սիմպոզիումներ, ամառային դպրոցներ, սեմինարներ) մասնակցության համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

1.2. Ֆինանսական աջակցություն տրամադրվում է գիտական միջոցառումներին բանավոր (oral) ու պաստառային (poster) զեկուցմամբ հանդես գալու համար՝ ճանապարհածախսը, օրապահիկը, գիշերավարձը, մուտքի վիզայի ու մասնակցության վճարները հոգալու նպատակով:

1.3. Հայտատուն ֆինանսական աջակցություն կարող է ստանալ տվյալ տարում կազմակերպվող միայն մեկ միջոցառման մասնակցության համար:

1.4. Հայտատուն ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով դիմում է ԵՊՀ ղեկավար մարմին՝

1.4.1. **grants@ysu.am** էլեկտրոնային հասցեին ուղարկելով պահանջվող մրցույթային փաթեթը՝ որպես նամակի վերնագիր նշելով “**Travel grant**”:

1.4.2. ԵՊՀ գիտակազմակերպչական խորհուրդը դիտարկում է մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը ներկայացրած հայտերը: Այս ժամկետից հետո ստացված հայտերը քննարկվում են հաջորդ ամիս:

1.5. Տրամադրվող աջակցության գումարի առավելագույն չափն է 700.000 ՀՀ դրամ:

1.6. Բանավոր ու պաստառային զեկուցմամբ հանդես գալիս կամ դրամաշնորհի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է անպայմանորեն նշել ԵՊՀ աշխատակից կամ ասպիրանտ լինելու մասին: Համապատասխան նշման բացակայության դեպքում գիտական արդյունքը չի դիտարկվելու որպես գործուղման արդյունք, հետևաբար չի ներառվելու հաշվետվության մեջ:

1.7. Դրամաշնորհի ավարտից հետո վարչություն է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա խորհուրդը տալիս է եզրակացություն՝ հաշվետվությունն ընդունելու մասին:

2. Ներկայացվող պահանջները

2.1 Ճանապարհորդական դրամաշնորհներին կարող են դիմել ԵՊՀ հիմնական աշխատակիցները, որոնք դիմելու պահին.

2.1.1. մինչև 65 տարեկան են,

2.1.2. ԵՊՀ աշխատակից են (հիմնական, համատեղությամբ կամ ժամավճարային հիմունքով աշխատող), գիտաշխատող կամ ասպիրանտ, որն իր գիտական աշխատանքներում ԵՊՀ-ն նշում է որպես աշխատավայր՝ ցանկություն հայտնելով մասնակցել միջազգային սեմինարների, գիտաժողովների կամ իր հետազոտական ոլորտին առնչվող այլ միջոցառումների:

3. Հայտերի փորձաքննությունն ու գնահատումը

3.1. Դրամաշնորհի հայտերի փորձաքննություն կազմակերպում է ԵՊՀ գիտակազմակերպչական խորհուրդը:

3.2. Խորհուրդը առաջարկում է փորձագետներ, հաստատում է փորձագիտությունների արդյունքները, անհրաժեշտության դեպքում կազմակերպում կրկնակի փորձաքննություն ու ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ֆինանսավորմանն երաշխավորված գործուղումների ցանկը:

3.3. Գնահատումը կատարվում է ըստ թեկնածուի ներկայացրած թեմային առաջարկվող միջոցառման կամ հետազոտական ճանապարհորդության ակադեմիական համապատասխանության, ըստ նրա գիտահետազոտական գործունեության ակտիվության (հոդվածներ, մենագրություններ, գիտաժողովների, դրամաշնորհների մասնակցություն և այլն), առաջարկի որակի, գիտաժողովի/սեմինարի միջազգային նշանակության:

4. ԴԻՄՈՒՄԻ ԿԱՐԳԸ

4.1. Հայտերը կարող են ընդունվել առցանց եղանակով ամբողջ տարվա ընթացքում ոչ շուտ, քան վեց ամիս, և ոչ ուշ, քան երկու ամիս՝ մինչև առաջիկա միջոցառումը:

4.2. Եթե դիմորդը չի կարող մասնակցել համաժողովին/սեմինարին/գիտաժողովին որևէ պատճառով (ներառյալ վիզաներ չտրամադրելը), տրամադրված միջոցները պետք է

վերադարձվեն ԵՊՀ-ին:

4.3. Դիմորդները տարեկան կարող են ստանալ մեկ կարճաժամկետ գիտաժողովի ու ճանապարհորդական դրամաշնորհ:

4.4. Ներկայացված հայտերը կգնահատվեն ամսական կտրվածքով ընտրող հանձնաժողովի կողմից: Թեկնածուներին պատասխան տալու միջին ժամկետը մեկ ամիս է:

5. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մրցութային փաթեթը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը՝

5.1. հայտ՝ «pdf» կամ «jpg» ձևաչափով (ստորագրված),

5.2. նախահաշիվ[1]՝ «pdf» կամ «jpg» ձևաչափով (ստորագրված),

5.3. գիտաժողովի հրավեր՝ բանավոր կամ պաստառային (poster) զեկուցմամբ հանդես գալու նշմամբ,

5.4. ինքնակենսագրություն, ներառյալ հրապարակումների ցանկը (եթե այդպիսիք կան) և այլ գիտաժողովների, դրամաշնորհների մասնակցության տվյալներ (եթե այդպիսիք կան),

5.5. գիտաժողովի մասնակցության հայտ ներկայացնելու դեպքում զեկուցման վերնագիրն ու ամփոփագիրը,

5.6. ընդունման կամ հրավերի նամակ (Acceptance Letter, Invitation Letter) գիտաժողովի/սեմինարի կազմակերպիչների/ընդունող համալսարանի/կազմակերպության կողմից,

5.7. աջակցության նամակ հետազոտողի ղեկավարի կամ գիտական ղեկավարի կողմից (եթե այդպիսիք կան),

5.8. օդանավի կամ տրանսպորտային այլ միջոցի տոմսի արժեքը/ուղեվարձը հավաստող որևէ փաստաթուղթ (առցանց ամրագրում (on-line) կամ այլ տեղեկանք),

5.9. ծախսերը հիմնավորող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

---

[1] Նախահաշվում օրապահիկի ու գիշերավարձի օրերի քանակը չի կարող գերազանցել գիտաժողովի օրերի քանակը, իսկ մեկ օրվա արժեքը չի կարող գերազանցել ՀՀ Կառավարության կողմից հաստատված սահմանաչափերը (տե՛ս http://www.taxinfo.am/upload/545%20KB_1327568171005.pdf):